ԱԲՈՎՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ
(Պրոֆեսոր Պիոն Հակոբյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)

Պիոն Հակոբյանը մերօրյա գրականագիտության այն բացառիկ ներկայացուցիչներից է, որը, որդեգրելով և յուրացնելով դասական հայագիտության բանասիրական ավանդները, գիտահետազոտական իր արգասավոր գործունեությամբ որակական նոր աստիճանի բարձրացրեց հայ գրականագիտությունը, հոգևոր մշակութային արժեքների մատուցումն ու ուսումնասիրությունը:

Ծագումով սերում էր Բարձր Հայքից գաղթած մտավորական գերդաստանից: Ծնվել էր 1926 թ. Ախալցխայի շրջանի Ծղալթբիլա գյուղում՝ քահանայի ընտանիքում, հայրը և ավագ եղբայրը մանկավարժներ էին, հորեղբայրը՝ բժիշկ. մի բացառիկ գրասեր ընտանիք, որի տանու լեզուն հայրենի Կարնո բարբառն էր և մեր հին գրոց լեզուն՝ գրաբարը, որին Պիոնը տիրապետում էր տակավին պատանեկան տարիներից: Օժտված էր բնական ընդունակություններով, բացառիկ հիշողությամբ: Գիրքն ու գրականությունը մանկուց նրա պաշտամունքն են եղել: Իր այդ արտասովոր ընդունակությունների շնորհիվ նա 1942-ին՝ գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուն պես, դիմում է Երևանի պետհամալսարան, սակայն փոքր տարիքի պատճառով չի ընդունվում, վերադառնում է գյուղ և դպրոցում զբաղվում ֆիզիկայի ուսուցչությամբ:

1945-ին ընդունվում է Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ուսանելիս նա իր արտասովոր ունակությունների և խոր գիտելիքների շնորհիվ իր վրա է հրավիրում դասախոսների և ուսանողության հարգանքն ու ուշադրությունը:

Համալսարանը գերազանցության դիպլոմով ավարտելուց հետո՝ 1950 թ., Հակոբյանն ընդունվում է ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Հայ նոր գրականության պատմություն» մասնագիտությամբ: Սկսվում է նրա գիտական բեղմնավոր գործունեության շրջանը: Թեկնածուական ատենախոսության թեմայի ընտրությամբ («Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը») և դրա կատարման քննական-բանասիրական մեթոդների կիրառությամբ հենց սկզբից կանխորոշվում է Պ. Հակոբյանի գրականագիտական ճակատագիրը: Հայ նոր գրականության սկզբնավորողի և դարաշրջանի մեծագույն հայի՝ Խաչատուր Աբովյանի կյանքն ու ստեղծագործությունն այնուհետ դառնում են երիտասարդ Հակոբյանի գիտական հետաքրքրությունների ամենասնեռուն առարկան, որը հետագայում նշանավորվեց աննախադեպ այնպիսի արդյունքներով, որոնց շնորհիվ աբովյանագիտությունը մեզանում բարձրացավ մի նոր աստիճանի, իսկ ինքն էլ

դարձավ մերօրյա խոշորագույն աբովյանագետը: Եվ այդ ամենը ձեռք բերվեց տարիների տքնաջան աշխատանքով ու Աբովյանի մեծագործության նկատմամբ անմնացորդ նվիրումով:

Պ. Հակոբյանն առավել քան մեկուկես տասնյակ տարիների ընթացքում ջանադրորեն պեղեց Տարտուի, Կազանի, Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Երևանի, Կիևի պետական ու գրական գաղտնի արխիվները, հայտնաբերեց ու ձեռքի տակ կուտակեց Աբովյանին վերաբերող գերմանալեզու, ռուսալեզու և հայալեզու արխիվային վիթխարի քանակությամբ նյութեր, զբաղվեց դրանց վերծանությամբ ու համակարգմամբ և կերտեց աբովյանագիտական իր մեծարժեք ուսումնասիրություններն ու տեքստաբանական-բանասիրական հրապարակումները:

Աբովյանագիտության բնագավառում Պ. Հակոբյանի անդրանիկ մենագրությունը (1955 թ.) նվիրված էր Մեծ լուսավորչի հանճարեղ գլուխգործոցի՝ «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմության բանասիրական-տեքստաբանական քննությանը, որը մեծ հաջողությամբ արդեն 1953-ին պաշտպանել էր որպես թեկնածուական ատենախոսություն:

Դրան նախորդել էին և մանավանդ հաջորդեցին գիտական բազմաթիվ հոդվածներ ու հրապարակումներ, որոնք բոլորն էլ աչքի էին ընկնում Աբովյանի կյանքի ու գրական-հասարակական գործունեությունը լուսաբանող նորահայտ փաստերով և նորոգ մեկնաբանումներով: Դրանցով հիմք էր դրվում աբովյանագիտության նորագույն դարաշրջանին, որը, ամենայն իրավամբ, կարելի է կոչել պիոնիակոբյանական:

Աբովյանագիտության մեջ կարևոր ներդրումներից էր գրողի երկերի լիակատար տասհատորյա ակադեմիական հրատարակությունը, որի սկիզբը դրվել էր տակավին 1940-ական թվականներին: Եվ ահա 1950-ական թվականների կեսերին այդ հրատարակության 7, 8 և 10-րդ հատորների բնագրերի կազմումը, թարգմանությունները, ծանոթագրությունները հանձնարարվում են երիտասարդ Պ. Հակոբյանին, որն իրեն հատուկ ջանասիրությամբ ու բանասիրական մանրակրկտությամբ իրագործում է այն. երեք հատորները հրատարակվում են 1956, 1958, 1961 թթ. և դառնում գիտական այդ նախաձեռնության փայլուն իրագործումը:

Աբովյանագիտության մեջ հաջորդ խոշորագույն ներդրումը, որ կատարեց Պ. Հակոբյանը, գրողի գիտական կենսագրության ստեղծումն էր, որի առաջին մեծածավալ հատորը լույս տեսավ 1967 թ.՝ «Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը» խորագրով և պաշտպանության դրվեց որպես դոկտորական ատենախոսություն: Հեղինակը հետագայում աշխատում էր երկրորդ հատորի շարադրման վրա, նախատեսել էր երեք մեծադիր հատորով կազմել և հրատարակել Աբովյանի կյանքի ու ստեղծագործության փաստալից տարեգրությունը, սակայն զգացվում էր այդ աշխատությունները լրացուցիչ փաստերով համալրելու կարիք, փաստեր, որոնք, ըստ հեղինակի տվյալների, պահպանվում են գերմանական արխիվներում: Բայց ինչ-ինչ պատճառաբանություններով ժամանակին չթույլատրվեց գիտնականին մեկնել Գերմանիա՝ արխիվային իր որոնումները կատարելու, որի հետևանքով հիշյալ աշխատությունները, ցավոք, մնացին թերավարտ: Ինչևէ, մեր գիտական հասարակության կողմից Պիոնի այդ աշխատությունն ընդունվեց բուռն ոգևորությամբ ու հիացմունքով. մամուլում

տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, որտեղ ամենուրեք շեշտվում էր այդ մենագրության բացառիկ աննախադեպությունն աբովյանագիտության մեջ իբրև Մեծ լուսավորչի կյանքի և գործի ամենափաստալի և հիմնարար հետազոտություն:

1981 թ. Պ. Հակոբյանի աշխատասիրությամբ լույս տեսավ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի բնագրորեն վերջնականապես ճշգրտված գիտական հրատարակությունը, որը «Վերքի» բազմաթիվ տպագրությունների պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի, և ետայսու պետք է դառնա Աբովյանի այդ անմահ ստեղծագործության գալիք բոլոր հրատարակությունների հիմքն ու ելակետը:

1984-ին դարձյալ Պ. Հակոբյանի խմբագրմամբ և վերջաբանով տպագրվեց «Վերք Հայաստանի» հրատարակությունների ռուսերեն նոր հատորյակը: Հեղինակի՝ աբովյանագիտության վերջին մեծածավալ աշխատությունն է «Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները»՝ հրատարակված 1997 թ., ուր ի մի են բերված Աբովյանի ծննդյան թվականի, անհետացման վարկածների, կենսագրական տարբեր իրադարձությունների, առանձին ստեղծագործությունների վերաբերյալ եղած զանազան կնճռոտ խնդիրների՝ գիտնականի կատարած նոր լուսաբանումները, որով հօդս են ցնդում ցարդ եղած անհիմն շատ կարծիքներ ու երևակայական տարբեր պնդումներ Մեծ լուսավորչի անձի ու գործի մասին:

Այս, ինչպես նաև Պ. Հակոբյանի նախորդ աշխատություններով առհասարակ խզվեց Աբովյանի անձի և մանավանդ նրա անհետացման շուրջը հյուսված լեգենդների շղթան, և Աբովյանը դրվեց իր իրական պատվանդանին, որն առավել մեծ էր ու առինքնող, քան նրան վերագրվող մտացածին, կեղծ բոլոր պատումները:

Խ. Աբովյանի կյանքի ու մեծագործության ուսումնասիրությունն առհասարակ ուղեկցել է Պ. Հակոբյանի գիտական ողջ գործունեության ընթացքին՝ սկսած 1951 թ. նրա գիտական նախաքայլերից մինչև նրա արգասավոր կյանքի արևամուտը՝ 2000 թվականը:

Աբովյանը մի առիթով արտահայտել է իր հետևյալ դավանանքը. «Ապրել և մեռնել հայրենիքի համար՝ ահա տակավին պատանեկան ամենավաղ տարիներից իմ ընտրած նպատակը»: Իսկ Պ. Հակոբյանն իր գիտական ողջ կյանքի նպատակը դարձրեց Խ. Աբովյանի կյանքի ու գործունեության հետազոտումը և, ինչպես ասվեց, մեզանում դարձավ աբովյանագիտության մեծագույն երախտավորը: Եվ այս էր պատճառը, որ դեռևս Պ. Հակոբյանի ծննդյան 60-ամյակին նվիրված հոբելյանական ժողովում ակադ. Ռուբեն Զարյանը, որ մեծ վաստակ ուներ աբովյանագիտության բնագավառում, անկեղծորեն խոստովանեց. «Եթե ինձ հարցնեին, թե ո՞ւմ կաշակերտեիր իբրև աբովյանագետի, ես անվարան կասեի՝ միայն Պիոն Հակոբյանին»: Բայց Պ. Հակոբյանը սոսկ աբովյանագետ չէր, այլև նշանավոր բանասեր էր, հայագիտության պատմության մասնագետ ու մշակութաբան: Պ. Հակոբյանը գիտական ու պարբերական մամուլում, գիտական տարբեր ժողովածուներում բազմաթիվ ուսումնասիրություններ է հրատարակել հայ հին ու նոր դասական գրականության մասնագետների ու հայագիտության նշանավոր ներկայացուցիչների՝ Մ. Նալբանդյանի, Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանյանի, Պ. Պռոշյանի, Ծերենցի, Գ. Մանդակունյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Սայաթ-Նովայի, Մ. Աբեղյանի, Հ.

Տաշյանի, Գ. Տեր-Մկրտչյանի, Շահազիզի, Ն. Ադոնցի, Ն. Մառի, Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսների կյանքի ու գրական-գիտական գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ:

Երկար տարիներ վարելով Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի գիտական տեքստաբանության բաժինը՝ Պ. Հակոբյանի ընդհանուր խմբագրությամբ ու վերահսկողությամբ էին կատարվում ինստիտուտի տեքստաբանական գրեթե բոլոր աշխատանքները: Նա իր բանասիրական-տեքստաբանական արժանի լուման է ներդրել Ա. Բակունցի երկերի IV հատորի, Մ. Նալբանդյանի երկերի VI հատորի, Մ. Աբեղյանի երկերի VIII հատորի, Ղ. Աղայանի երկերի I հատորի կազմման աշխատանքներում: Բանասերի գիտական վաստակի մեջ բացառիկ տեղ են գրավում արևելահայ նոր հայագիտական մտքի խոշոր ներկայացուցիչ Գ. Տեր-Մկրտչյանի հայագիտական ժառանգության ուսումնասիրությունները և մանավանդ պարբերական մամուլում ցրված այդ ժառանգության հավաքումն ու երկհատոր գիտական հրատարակությունը, որը խոշոր ներդրում էր հայագիտության պատմության մեջ[1]: Նույնպիսի մի ազնիվ մղումի արդյունք էր անվանի բանասեր Երվանդ Շահազիզի «Աշտարակի պատմությունը» խորագրով պատմաազգագրական ձեռագիր աշխատության բնագրի պատրաստումն ու հրատարակությունը (1987 թ., որի շնորհիվ նա ընտրվեց Աշտարակի պատվավոր քաղաքացի), որը Պ. Հակոբյանը կատարեց իրեն հատուկ մեծ խնամքով ու նվիրումով:

Լինելով լայնահուն ու բազմահմուտ գիտելիքների տեր բանասեր՝ կյանքի վերջին տասնամյակում, իբրև Էջմիածնի Գևորգյան ճեմարանի հոգևոր խորհրդի անդամ, Պ. Հակոբյանն իր մասնագիտական հմտությունները դրսևորեց նաև հայոց եկեղեցական մշակույթի պատմության բնագավառում: Հրատարակեց ուսումնասիրություններ՝ նվիրված հայոց վկայաբանությունների հետազոտման արդի խնդիրներին, Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանի եպիսկոպոսական աթոռներին, Անդրկովկասի հայ կաթոլիկական համայնքների պատմությանը, հայագիտական տարբեր խնդիրների և «Հայոց եկեղեցական թեմերին»[2]:

Այսպիսին է ընդհանուր գծերով Պ. Հակոբյանի գիտական դիմապատկերը: Նա կյանքից հեռացավ իր ուժերի ծաղկման ու իմաստնացած շրջանում՝ կիսատ թողնելով որոշ գործերի նկատմամբ տարիներ շարունակ փայփայած իր իղձերի իրականացումը: Բայց այն, ինչ կատարեց Պ. Հակոբյանն իր գիտական ողջ կյանքի ընթացքում, իսկապես գիտական մի աննախադեպ սխրանք էր, որն իր անանց արժեքով հավերժ մնալու է հայագիտության ոսկե ֆոնդում՝ նշանավորելու հեղինակի անմար հիշատակը:

Պ. Հակոբյանը վախճանվել է 2000 թ. սեպտեմբերի 26-ին և թաղված է Աշտարակի քաղաքային գերեզմանատանը:

Թող երիցս օրհնյալ լինի Պիոն Հակոբյանի՝ մարդու և գիտնականի սուրբ հիշատակը:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

---

[1] *Տե՛ս Գ. Տ ե ր - Մ կ ր տ չ յ ա ն. Հայագիտական հետազոտություններ, Երևան, հ. I, 1979 և հ. II, 1998:*

[2] *Տե՛ս Պ. Հ ա կ ո բ յ ա ն. Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2003:*